

կի հետ փոքր առ փոքր զօրանալով՝ կանէ նրան առաքինի կամ մոլի:

Աշխարհի վերայ այնքան պատիւ ունին մոլեքը, որքան աւագն խիճը՝ հազուադիւտակի մօտ. սորա համար մոլիններն են անթիւ՝ բայց առաքինիքը սակաւաթիւ. կորովամիտ Վիողինէսը արեւի լուսոյ առաջը լապտերը ձեռքը բռնած մարդկանց մեծ բազմութեան մէջ մարդ կը խնդրէր, և զարմանալու չէ. որովհետեւ ահա՛ իմաստուն վաճառականները ևս հայրենի աշխարհքից ծովէ ծով ընկած՝ հազուադիւտակեր կը գնեն և թանկագին մարդարիտներ: Աթէ մարդուն հազուադիւտականէ առաքինութիւնը, և դիւրագին՝ մոլութիւնը, ուրեմն պարտական են ծնողքը աշխատիլ զարդարել իրենց զաւակը առաքինութեամբ, քանի որ մանուկ են. ըստ որում առաքինութիւնն է գեղեցիկ զարդ մանուկների, ինչպէս ասացին իմաստունները:

Սա բնական է, որ մի և նոյն գերդաստանի մէջ հայրը աւելի կ'սիրէ որդւոյն, իսկ մայրը աղջկան. և սրան շատ կը յարմարի այս վաղեմի և իմաստուն խօսքը. «Ման գնմանն սիրէ», . սորա համար սիրոյ և բնութեան օրէնք կան, որ տղայքը դաստիարակուին հօրից, իսկ աղջկունք՝ մօրից, որով սնուցեալները իրենց դաստիարակներին նմանելով, տղայքը լինին քաջ և սրբտոտ, բարոյական և ուսեալ, իսկ դստերքը՝ պարկեշտ և պատկառոտ, նոյնպէս սուսեալ և բարեկերթ: Չէ հարկ ուրախանալ ծրնողաց՝ որ ունեցան զաւակ. այլ երբ որ նա ի զարգանալ հասակին եղաւ առաքինի, համեստ, շնորհունակ և հմուտ այլևայլ գիտութեանց կամ արհեստից: Ըստ իմաստնոյ առակին՝ Արդի իմաստուն ու-

րախ առնէ զհայր. որդի անմիտ արամութիւն է մօր,, :

Մանուէլ Սարգիս-աֆ Ժամակոյեանց

«Մար և ընկէ՛ա գրա, ընդէ՛ր և զերկեր իս-
փանէ,, : Ա-ե-ր:

Աշխարհիս տեսարանումը մարդս ի՞նչ կարող է նկատել, եթէ ո՛չ խառն իխուռն մարդկանց բազմութիւն, որոնք անդադար կջանան դէպ ի յառաջ դէպ ի յառաջ: Բայց անյայտ թեւակոխութիւն, որոնք որ շատերը իսկութեամբ չգիտեն թէ՛ ո՞ւր պիտի յառաջնեն և ո՞ւր է նրանց դէմ դըրած ասպարիզի ծայր,

Մէկը աշխարհի ծովեր և ցամաքները չափելով լցնումէ իւր գանձատուն աշխարհիս թանգագին նիւթերը, և իրաւապէս կարծումէ բազմացուցանելով իր ոսկւոյ արծաթոյ պատուական ականբի մթերները՝ կարող է կշտացնել իւր անյագ մաշող սիրտը: Մէկը՝ իր կարծուած գեղեցկութեան յապուշ կրթելով զմայլումէ իբրև չնաշխարհիկ համարելով մարդկային ընկերութեան մէջ՝ զանազան սնտախ յոյսերով լցուած՝ կջանայ իր ունայնամիտ սիրտը համոզել և օր քան զօր շքեղացուցանել իր եղծանելի պատկերը ի հիացումն . . . : Ոմանք իրանց անընկճելի քաջութեան ասպատան լինելով զհետ կպնդեն անկարելի և անհասանելի աշխարհը իրանց սեպհականել՝ փառաց և պերճութեան ջորին նստելով՝ որպէս զե աղաղակէ զինի նոցա անմիտ բազմութիւն, Ավսանն/ները՝ համբոյր հանդերձ ծնրադրութեամբ:

Ըստ՝ կարշաւեն անարգել. բայց ո՛չ մէկը իր նպատակին հասու ելնել չէ ձեռն-

հաս. միայն կհամարեն իրանց անյազ ցանկութիւն լցուցանող: Ահա դէպ ի յառաջ դէպ ի յառաջ, կյառաջեն՝ ո՛չ ընկերութեան և հասարակութեան շահն ևս մասնաւորապէս գոնէ մատակարարելով՝ այլ անձնական. միայն այժմ պէտք է մէկ Վիոզինէս որ որոնէ այս խուռն բազմութեան մէջ իւր ցանկութեան ծայր հասնողին: Այո՛ կան շատ Վիոզինէսները, բայց դու արի՛ աշխարհս չափելով՝ որ գտնես Վիոզինէսի լապտերը՝ այն հրաշալի լապտերը, այն ցորեկւան լուսատու լապտերը. ո՛ր գիտէ Ովկիանոսներումն է թաղուած՝ թէ երկրիս խորերումը, գուցէ թէ նոյն իսկ Վիոզինէսի գերեզմանումը:

Իայց հիմայ հարկաւոր է նոր Վիոզինէսներին նոր լապտերներ կազմել որպէս զի արեգական փայլուն ճառագայթների առաջին լոյս տայ, որով գտնուի իր անյազ ցանկութեան ծայր հասնողը: Ինչպէս այն ստուերախիտ սաղարթանման ծառը՝ որի ծայրը երկինք բարձրացած կրճէ:

Իայց ամենացաւալի և զարհուրելի ժամըն այն է, որ սարսափելի ձայնը պիտի հասնէ ետեւից՝ « Էտ և ընկեա՛ զգա, ընդէ՛ր և զերկիրդ խափանէ, »: Աւ յիրաւի, կըսուի՞ այն մխիթարական ձայն ևս, որ մէկը առաջ ընկնելով միջնորդէ, ինչպէս այգեպան ասելով՝ « Տէ՛ր թո՛ղ այս ամս ևս, շուրջ զգովաւ բրեցից և արկից զաղբ, թերևս արասցէ պտուղ, ապա թէ ևս յամէ՛ կտրեա՛ », : Իայց ե՛րբ, զառամեալ հասակի՞ն, այն զառամեալ սաղարթներին տարածամ կենանց դիպիցէ տալ պտուղ: Գուցէ՛ թէ շատ ևս պատահի, դարձեալ կարօտում ենք Վիոզինէսի ցորեկուան լուսատու լապտերին, որով գտնենք այնպիսի

զառամեալ ծառը, որ իւր տարածամ հասակին ցոյց տայ իւր վերայ զմայլեցուցիչ պտուղները:

Իայց միթէ՛ այնքան մարդիկ որ այնքան հազարաւոր տաղանտները գործ են դրած և հասցրեր արդիւնքների ծայր մինչև երկինք, չեն պտուղ, որին ամեն մարդ կարող է տեսնել և զարմանալ, ի՞նչ են, Վիոզինէս ստուերի, այո՛ ստուերի պրտուղները, ինչպէս այն բարձրահասակ ծառ՝ որ ունելով իւր գագաթին տերևով ծածկած պտուղներ ամուր կոթերով, բայց կինայէ ցած ձգել ի վայելումն: Աւրեմն ի՞նչ կերպով և ո՞ր զօրութիւնով և կամ ո՞ր հնարքով պիտի ձեռնհաս լինի կոյր, կաղ, ծեր, մանուկ, հիւանդ, իր կարօտութիւն լցնել, գուցէ թէ միայն հատընտիր հզօրները ու թռչունները պիտի կարողանան յափշտակել, և այնպիսուոյն ևս է ասում պտղատու ծառ, այնպիսուոյն ևս կրկնուի նոյն ձայն՝ « Էտ և ընկեա՛ զգա, ընդէ՛ր և զերկիրդ խափանէ, »: Ատրեա՛, զե՛նչ, ի շինութիւն ապարանից թէ հոյակապ շքեղատես պալատից, և կամ թէ ապաստանարան կաղերին՝ կոյրերին, և կամ պանդոկ օտարականներին: Ա՛չ, ո՛չ, այրելոյ համար: Այն ծառը որ իւր բարձրութիւնով սաղարթախիտ տերևներով շատ մարդկանց տեսութիւնները կափշեցնէր իւր մեծութեամբ, հիմայ չքացաւ փոշի դարձաւ՝ նման այն տերևալից թղենուոյն՝ որի տարածամ մահը զարմացոյց: « Տէ՛ր, թղենին՝ զոր անիծեր՝ ցամաքեցաւ, »: Ահա՛ այսպէս կլինի ամենի վախճան՝ որ իր ժամանակին իր կարողութեան համեմատ կը խնայէ տալ պտուղ. ահա՛ արդարութիւն, ահա՛ անաչառ դատ և այգեպանի պատաս-

խանն. «Ասցի և մնացի զե բերիցէ խաղող, և երեր զփուշ, որ է կրկին կուրութիւն. մարդկան գործ ահա աստղաբաշխի գործ, որ երկինք չափելով աստղեր կհամարէր, մոլորակաց դիրք կքննէր, բայց ոտերի տակ չկարողացաւ դիտել վհի մէջն ընկաւ. դուցէ թէ և ինձ ևս պատահէ աստղաբաշխի աղախնս ոյն տուած հարուած: Բայց ո՛չ ինչ. այնպիսին իւր ճշմարտութեան անջնջելի արձան կանգնեցնումէ աշխարհի միջումը. թո՛ղ աղախին նահատակուի ճրջմարտութեան համար, իսկ անունը կմնայ անմահ: Ա՛խանձ ունի իրաւունք վեր առնել մարդը աշխարհի երեսից, բայց ո՛չ անունը ու գործը: Անեղաւ որ վրեժխնդրութիւն հազաւորները լափեր է և լափելով չի պիտի կարողանայ հասնել իր վախճանին:

«Մտէք ընդ նեղ դուռն և անձուկ ճանապարհ՝ որ տանի ի կեանս, և սակաւք են որք մտանեն ի նա,»: Միթէ՞ մեր ճանապարհ նեղ չէ և այս աշխարհի դուռ որ տանի դէպ ի կեանք, որ այսքան անտանելի աշխատութեամբ, ընդ ծով և ընդ ցամաք ճանապարհորդելով անհամար վշտեր, ցաւեր տեսնում ենք, նեղութիւնով ու հազար և մէկ տեսակ փորձութիւններով կրդ բաղկնք աշխարհիս դժուարանց ճանապարհներով, զիշեր և ցորեկ փքնու թիւն, անհանգստութիւնք, մտածութիւնք, հոգք և ազգի ազգի ցաւեր, որոնք պատահում են մարդկներին, դեռ ևս նեղ և անձուկ ճանապարհներ չեն: Արդարև աշխարհիս դուռն նեղ է, բայց մեք կհամարենք ընդարձակ, որով մեք կամենում ենք մեր սրբտի անյագ ցանկութիւն լցնել, ունայնամիտ փառքերը աւելացնել, և այս նեղ

դուռով մտնելը է մեր անձնական շահուն համար և ո՛չ ընկերութեան, և կամ ազգին, որոնք կվերաբերին Աստուծոյ պատուիրանաց, և ասումէ «Սակաւք են որք մտանեն,»: Աւ յիրաւի շատ քիչ կան որոնք կճանաչեն իրանց սրբազան պարտաւորութիւնը, թէ ծնուած են ճանաչելով զԱստուած և ճշմարտութեամբ պաշտել զնա, և յետ Աստուծոյ սիրել զեղբայր, զընկեր, ազգ, հասարակաց շահը իրան համարել, և իրա շահը հասարակութեան, և այն ժամանակ այս աշխարհիս վերայ մեր քաշած նեղութիւնները կհամարուին նեղ դուռ, այնպիսի նեղութիւնները որոնք վերաբերին Աստուծոյ պատուիրանաց: Իհարկէ ումեմն շա՛ռ ումեմն սակաւ, իւրաքանչիւր կարողութեան չափ ամեն մէկը կպարտաւորի օգնել ընկերին: Աստուած ո՛չ այնչափ շատ մատակարարած նուէրքին կնայի, որչափ բարեյօժար սրտի բղխածներին, ինչպէս այրի կնոջ լումայն: Բայց ի՞նչ աննք որ այսպիսի մարդիկ շատ և շատ քիչ են, և կարելի է ասել թէ հազուադիւրս, ինչպէս որ շատ անգամ լսեր ենք և տեսնում ենք, որ եթէ հասարակութեան կամ ազգութեան և կամ մէկ ընկերութեան մի գործ առաջարկուի՝ որն որ կվերաբերի յօգուտ հասարակութեան, երբոր կհրաւիրեն մէկ պարոնի տեսուչ կամ անդամ, և կամ այլ ինչ միջոցով ձեռնամուխ լինել հասարակութեան գործին, որ իբրև ազգեցութիւն ունեցող ժողովուրդեան վրայ և կամ գործ առաջ տանող, նա իսկոյն իւր դժկամակութիւն կը յայտնէ հրաժարելով և զնքը միանգամայն անպարտ կհամարէ հասարակութեան շահուն ձեռնամուխ լինել: Ասումէ այն պա-

րոն, իմ գործ չէ, ես հազիւ թէ իմ գործ ունիմ, ես աստուծոյ չեմ որ անցաւ դուրսս դնեմ աւետարանի տակ, իմ օգուտս ի՞նչ է, և ի՞նչ պիտի շահուիմ. ես առանց էն էլ հազար ու մէկ գործ ունիմ, չեմ կարող, հրաւիրէ՞ք պարասպանաբանց. ստուէք ուրիշներին, ուրիշներ շատ կան: Աթէ հատարակութիւնը պատասխանէ թէ արդարեւ կան ուրիշները, բայց չեն կարող ձեր գործ կատարել աս որ դուք հմուտ էք այս գործին, ք, որ դուք բաւական ազդեցութիւն ունեք ժողովրդեան վրայ, ձեր ասած չի կրկնում, Գ. գործ ձեր ձեռքով շուտով առաջ կգնայ քան թէ ուրիշներին, Կ. որ եթէ դուք հրաժարելիք՝ շատերը ևս ձեզ նման կանեն և դուք կլինիք ոչ թէ բարի օրինակ՝ այլ չար: Վարձեալ նա իւր անձնական շահուն և անձին հեշտութեան համոված մինչև անգամ բարկանումէ ասելով՝ միթէ ես պարտաւոր եմ հասարակութեան ծառայելոյ: Հասարակութեան գործ կատարել չընդունեց. հիմայ ուրիշ անգամ պատահի որ մէկ ուրիշ պարոնը գայ նոյն պարոնի մօտ, և խնդրէ որ նա էլ նուիրատուութեամբ մասնակից լինի ընկերութեան գանձանակին, որ գործ պիտի դրուի որ և իցէ աղքատ ժողովրդեան օգտին. (հիմայ ինչ պիտի պատասխանէ) հա, հա, գիշեր և ցորեկ ներգութիւն քաշելով օտարութեան մէջ, ջրի և ցամաքի վրայ պատելով, ահր աչքերնիս առած աշխատենք բերենք տանք ձեզ, էս ի՞նչ է, ո՞ր մէկին պատասխան տանք, թագաւորի խաղնէն էլնի կրպրծնի. մէկը գալիս է թէ Արամեան ընկերութեան փող տո՛ւր, մէկը գալիս Մեսրոպեան Վարդգիս փող տո՛ւր, միւսը գալիս

է՛ աղքատ ընտանիքին փող տո՛ւր, մէկը՝ հիւանդանոցի համար տո՛ւր, ասեա թէ ես փող գտած լինիմ կամ գողացած, որ ամեն մէկը առանձին գալիս են, տո՛ւր տո՛ւր: Գնա՛՛ գնա՛՛ ակրբար որ ճանապարհով էկած էս՝ էլի էն ճանապարհով գնա՛՛, թէ չէ՛՛ անպատիւ կ'լինիս. գնա՛՛ Աստուած աղաչէ որ փող գանեմ, էն ժամանակ ձեզ բաժին կտամ:

Ահա՛ սիրելի ընթերցողք՝ այսպիսիները շատ կան թէ քիչ, թէ երբէք չկան, և հաւաստի եմ որ կպատասխանէք թէ՛ շատեր կան: Ահա՛՛ Վարեկացւոյ բան «Օտուս ամբարձուղէշ տերեալից ունայն ի պողոյ զոր տէրն գօսացոյց, : : Ահա՛՛ անկարծիք այգոյ տէր կգայ իւր այգւոյ տեսութեան, այգւոյ պտուղներ հաւաքելոյ, բայց ե՞րբ՝ ո՞ր ժամանակ, առաւօտեա՞ն՝ թէ ցորեկուան՝ թէ գիշերուան՝ անյայտ է. էս միայն զիտեմք որ անշուշտ պիտի լսենք այն այգւոյ տէրի զարհուրելի ձայն: «Հատ և ընկեա՛՛ զգա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ: Աւա՛՛ղ, այն սոսկալի ժամուն, որ ո՛չ մէկ այգեպան էլ չէ միջնորդելոյ այնպէս անօգուտ ծառի մասին, և այնուհետև պիտի վառարանաց նիւթ բազմապատկէ:

Մարդոյս աշխարհի վերայ ունեցած պրտուղները ի՞նչ են, ո՞չ ապաքէն ընկերութիւն, որ ամեն օրէնքները ընկերութիւն թեամբ կըրանան: Աստուածապաշտ կամ աստուածասէր մարդը կարո՞ղ է ընկեր չըսիրել, և իւր կարողութիւն հասածին չափ խնամք չտանել չպահպանել: Աթէ ունի ճշմարիտ աստուածսիրութիւն՝ ունի և ընկերսիրութիւն, չունի ընկերսիրութիւն՝ ամենեւին աստուածսիրութիւն ևս չունի. եթէ մերժենք ընկերսիրութիւնը՝ ուրեմն

կմերժենք աստուածասիրութիւն, եթէ
 կրնգունենք մէկը՝ ուրեմն կրնգունենք միւ-
 սր, ինչպէս Առաքեալն ասումէ. « Եթէ
 ընկերիդ որ տեսնումես չես սիրում, Աստ-
 ուած, որին չես տեսնում՝ ի՞նչպէս կարող

ես սիրել, . . . ահա գործով կյայտնուի մար-
 դոյս աստուածպաշտութիւն և ոչ լոկ
 խօսքով :

Պապոսոսար Մինասեան Վերելեանց
 է ք. Նոր Պայտի:

Մ Ա Ս Ի Ս :

Մինչ ցերբ Մասիս, Հայոց մեծաց նուիրական և սուրբ լեռ
 Պիտի տեսնեմ սպիտակափառ քո դագաժը ամպամած,
 Եւ ստորոտիդ շուրջը եղած հին քաղաքներն ու գիւղեր
 Շատ դարերէ ի վեր այդպէս հողով փոշուով ծածկուած.
 Եւ մինչև ցերբ պիտի մնան քո որդիքը հարազատ
 Խոր տիրութեան մէջ ընկղմած անգործունեայ, անտարբեր
 Միժէ գեռ ևս յոյս մի ունի՞ն որ քաջ Քերթողն Արտաւազգ՝
 Ընդունդներէդ ելնէ փշրել մեր ամրապինդ շղթաներ . . .
 Միժէ կրնամք յուսալ կրկին Ամասիա մի տեսնել
 Ար անունը քեզ պարգևեց « Մասիս ազատ », կոչելով .
 Նորա նման կեղևն արդեօք աշխարհաչէնք, չքնաղ լեռ,
 Ար ձեռք զարնն կառուցանել նոր քաղաքներ քո չորս քով :
 Միժէ կրնամք յուսալ, որ նոր Առամհապուհ մի ծնանի,
 Ար խրախուսէ մեր հոգևոր ու աշխարհական գրիչները .
 Թէ մեր ազգին ասկէց վերջը ճակատագիրն այն կլինի,
 Ար յուսակտուր, անվարձ, անփոյթ անցընէ իւր օրերը :
 Եւ համազգի եղբարց շատը օտար տեղեր թափառիկ,
 Ստրկութեան ծանր լուծը միժէ յաւէտ պիտի զգան .
 2 կայ արդեօք յոյս մի, Մասիս, որ զքեզ և զմեր աշխարհիկ
 Այն մարդկութեան խանձարուրը դարձեալ եղբարք մեր տեսան :
 Տեսնան զքեզ ազատագանձ և վանքերը զարդարուած՝
 Հայաստանի զիւղն ու քաղաք նոր նոր դպրոցք հաստատուած .
 Եւ ես, Մասիս, ունենամ յոյս, որ մարմինըս 'Լ ոսկորներ՝
 Հայաստանի մէջ կամփոփուին, ուր կարօտով եմ զիմեր :
 Մասիս, Մասիս, տարաշխարհիկ պանդուխտ մի եմ զգայուն,
 Ար տապանիդ սիրոյն զիմած կանցընեմ հոս կեանքս պանդուխտ .
 Եւ կսպասեմ որ մի նաև բողոր ազգը Հայկազուն՝
 Տեսնեմ քօլըդ՝ յետոյ ձեռնիմ . այս է սրտիս միակ ուխտ :

Ս. Մարտիկեան :

